



79. ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐԸ ՀՈՒ ԶԱԼ ԿԱՏՈՒՆ

Ինքն ա, ինքն չի, մին ճաղացական ա ինքն ուրա պառավի նհետ, համա ըստանց խոխա չի ինքն: Քչեր ու ցիրեկ ըստանք Աստուն դաչանք-պաղատանք են անքն, որ ուրանց մին խոխա փեչքեչ անի, օջաղի ծուխը ծրխող տա, համա Աստոծ քառանգաճի յա անքն, տամ չի:

Մին անքամ էլ ճաղացականը եփ ճաղացքն ա ինքն, պառավը արաղին տենքն ա, որ մին դուշ ուրա ծոցքն ղըլվըլքն ա: Հենց որ զանթնքն ա, տենքն ա կըչտին մին խոխի բանուր: Էս խոխեն հալա մին ամսական տանած չի ինքն, ըսկարն ա ոտով քինալը հու բըլբըլալը: Ճաղացականը եփ տուն ա կանխ, խոխեն ուրա ոտովը վազ ա տամ, ճաղացականի փեչկիցը կախ ընգնքն հու «ապե, ապե» կանչքն:

Ճաղացականը մընքն ա մանթնալ կըտրած, պայից խոխին խըտըտըն ա հու կընգանք հըրցնքն.— Ես ուն խոխեն ա:

— Եփ տոն քինանցիր ճաղացք, ես բոլրքան պատճառավոր տառա, հու էտ տղա խոխեն պըտկըվեց, —ասքն ա կնիկը:

Ճաղացականը ուրխուլթունիցը ըսկարն ա պար կնլ, խըտըտըն ա տըղին, պըչպըչորքն, էդո անքնք տնքն ա Աստվածատուր: Համա ետ երգեն անքնք կարքն չեն ասիլ, կանչքն են Ծատուր: Տըղեն իջքան մեծանքն ա, ուրանք էնքան պառավքն են: Եփ Ծատուրը տանքն ա տասը տըրեկան, ճաղացականը մեռնքն ա: Հանլամ ճաղացականի տարին թըմամած ոչ, պառավն էլ ա մեռնքն: Ծատուրը մնքն ա մինն ու մինակ, առանցի կարքին չորի հու ուտիլիքի: Դե ճաղացականի տանը ի՞նչ պիղի իներ, զանմից սավայի:

Սըհենց մին օր էլ Ծատուրը շատ ա սոված ինքն, քունջ ու պուռախ շատ ա տակն ու վրան անքն, համա ուտիլի պան չի ճարքն, նըստքն ա լաց ինքն:

Էս լացի սասին մին չալ կատու յա կանխ:

Ծատուրը վախնքն ա, մընքն ծալքի տակը, համա կատուն ասքն ա.— Ա՛խ խոխա, վախի՛լ մի, ես հու մարթակել չեմ: Եկել եմ քե քոմանգ անեմ, ոնց որ մին վախտ ինձ քու մերն ա քոմանգ արել: Ես

էլ առանց մեր ի մնացել, քու մեր իզ պերավ տուն, ամման օր կաթն էր տալիս, միս էր տալիս, մինչու մեծացա, ինքըս իմ կըլիսի ճարը տեսա: ՄՀի եկել եմ ընդրա լավութունի փոխը տամ:

Տըղեն որ էտ լարմ ա, ծալքի տակիցը տո՛ւս ա կամ:

Ձալ կատուն կրակ ա անըմ, դազանով ճո՛ւրը տինըմ վրեն:

—Տո՛ւ ցան կանես, որ ճո՛ւրը եռ կա, ես էս սըհաթին կըկամ,—ասըմ ա հու ինքը քինըմ:

Քինան ու կանը մին ա ինըմ:

Ենեն քաշ տված մին ոխճար ա պերըմ, կաշին մաշկըմ, քո՛ւրք կարըմ հըքցընըմ տղին, միսը լըցնըմ դազանը:

Միսը հենց որ խաչվամա յա ինըմ, կուշտ ու կուռ ուտըմ են, եղո կատուն ասըմ ա.—Տո՛ւ տանը կընըստես, մնացած խելնք միս կա, յավաչ-յավաչ կուտես հու կըսպասես ինձ: Ես քինըմ եմ մին բարաթ տունը քըթնեմ, թանչն էս տունը մին օր փուլ ա կանլու կըլիսիտ:

Կատուն շատ ա քինըմ, թան քիչ, էտ էլ Աստոծ գիղամ, մին էլ տե- նըմ ա օխտը ածղահա հեսա խոտ են հարըմ:

Որ շատ ա մոտկանըմ, ածղահոցիցը մինը ըսկսըմ ա մըրթմըր- թալը.—Պանհ-պանհ, էս ի՞նչ մսի հոտ եմ առնըմ:

Կատուն էլ ուրան կորցընըմ չի.—Տնաչեննի՛, տո՛ւք քնած եք ծեր ոնենըր ճըրըմը: Կըլխընըրիտ ճարը տեսե՛ք, քանինչ ծեր հո- քեհաննին եկել չեն ու ծեղ սաղ-սաղ խըրոկել: Կանդընվե՛ք, քանիչ չո՛ւտ ա,—ասըմ ա հու ինքը թըռնըմ ծառի վրեն:

Ածղահեքը տես են ընգնըմ, տես են ընգնըմ, կարըմ չեն մին պուճախ ճարեն կանդընվիլի:

Կատուն ասըմ ա.—Ի՞նչ եք կըլխընիտ կորցըրել, մըտե՛ք խոտի կո՛ւտանկը:

Ածղահեքը հենց մըննըմ են կո՛ւտանկի մեչը, կատուն իչքան խոտ ա ինըմ, վըհաքըմ ա լըցնըմ վըրեքնին հու պաժառ տալի: Ոչ մինն էլ ա սալամաթ պըրծնըմ չի:

Կատուն վազ ա տալի, Ծատուրիս պերըմ ածղահոցը ամա- րաթը, վըրի մորթին հանըմ մին օթաղըմ կանըմ, տըղին թանհին- թանչախուտին չո՛րեր հըքցընըմ, ասըմ, որ ամարաթն էլ ա ուրանը, իլած-չիլածն էլ:

Ածղահեքը շատ հարուստ են ինըմ, ընդանց թալանած շատ ոս- կի հու արծաթ ա ինըմ, կոմերն էլ լիքը տավար: Մինակ փիսն էն ա ինըմ, որ չորս դոլին ածղահոցը զանգանդիցը ոչ մին մարթ չի ապրիլիս ինըմ:

Կատուն էհմալին ամման ինչ տեղը-տեղին անիլից եղո էլհամ կըլիս ա վեր ունըմ քինըմ, մարթ ճարի պերի, որ Ծատուրը մինանկ չինի:

Շատ ա քինում, թն քիչ, վերչը հրանում ա մին կեղի: Ժողովուրթը շատ ախկադ ա ինում, չոնքի հողը քիչ ա ինում, իլածն էլ կարքին պերք չի տալիս:

Կատուն չիմմին վըհաքըմ ա, ասըմ.—Այ ժողովուրթ, ինձ ծեր կուչտն ա ղըրկել Աստվածատուր աղեն, որ տոբ քոչեք, ուրն կըչտին ապրեք, ամման մինիտ էնքամ հող կըտա, իչքան ծեր սիրտը կուզի:

Ժողովուրթն ուրխանում ա:

Մին բիձն ետ ա տանում, թն.—Քինանք, ա' խալի, համ հողի տեր կըտանանք, համ էլ մեր կըլին մին օրինավոր տեր կինի:

Քոչըմ են, աղեն էլ վըրատիր թնգան Աստվածատուր տանձ Ծատուրի ամարաթի չորս ղոլին տներ են չինում, ըսկըսըմ կարքին ապրիլը: Համ ուրանց են պահըմ, համ աղին, համ էլ ընդրա բոլոգներով տավարը:

Աստվածատուրը մին քանի տարուց եդ տանում ա իսկը թավադ: Համա կատուն դինջանում չի: Ուզըմ ա Ծատուրին փըսակի, որ ուրն պարտկը փակած ինի:

Վեր ա կենում քինում սարի էն ղոլին ապրող հարուստ թավադի կուչտը:

Թավադը մին էլ տենում ա՝ հեսա մին եխտոտ կատու ուզըմ ա պըցրանա ուրանց էյվանը, կարքադըմ ա՝ չները պնց թողան, համա կատուն ասըմ ա.—Ըտենց պնն անի'լ մի, թավա'դ, բախտիտ քար մի' քըցիլ:

Թավադը էս որ լսըմ ա, ուրն կարքադըմ թունը ետ ա վեր ունում:

Կատուն պըցրանում ա էյվանը հու թավադին ասըմ.—Աստու ողորմութունը քու տանիցը թո անպակաս ինի, ինձ քու կուչտն ա ղըրկել քե մընան ջնհիլ-ջիվան Աստվածատուր թավադը՝ քե նհետ պարեկամանալի մհար:

Թավադը կարքադըմ ա ղուլլուղչոցը, որ կատվին լըղըցնեն հու տանեն ղոնադթադը: Կատվին լըղըցնում են, տինում մախմուր տեղաչոըմ, որ քնի: Մինչու կատուն մըմըմալով քնում ա, թավադը ղոնախլըղի թնգանիք ա քաչըմ:

Կատուն հենց որ զարթնում ա, վըհաքվըմ են թավադի մարթիք հու զարմանում, որ կատուն մարթի մնան խոսըմ ա:

Եփ նըստոտըմ են սուփրի չորս ղոլովը, թավադը իրեսը խաչակընքըմ ա, ծեռը մեկնում, որ հաց վեր ունի, կատուն ասըմ ա.—Ոտիտ տակի հողն ինեմ, թավա'դ, մինչու գիղանմ ոչ, որ ինչի մհար եկել եմ, կըլի ա կալու, ես հացիտ ծեռ չեմ տալ:

Թավադը ծեռը ետ ա քաչըմ, ասըմ.—Դե որ ըտենց ա, տոն ասա',

մենք էլ լրսենք: Աղանթ ա, դոնադին հըրցընիլ չեն, թան ինչի յա եկել, համա որ տո՛ւ ուզըմ ես, պատմի՛, ինչի մհար որ եկել ես:

Կատուն էլ կաղնըմ ա, թան.— Իմ տերը՝ թավաղ Աստվածատուրը, ուզըմ ա քու փեսեն տանուն: Ասեմ, որ Աստոծ ընդան մեծ չենք ու չնորք ա տվել, չիմչատ բոյ ու բուսաթ, մալ ու մոլլքին էլ տեղ ու թանթանր կա ոչ:

Թավաղը ասըմ ա.— Դե որ Աստվածատուր թավաղը ուզըմ ա ինձ նհետ պարեկամանա, ես խի՞ պետմա ուզեմ ոչ: Տո՛ւ հանգի՛ստ նըստի, հացըտ կե՛ր, իմ քիրը քու թավաղին փեչքեչ:

Ես պանը եփ թավաղի մարալ քիրը լրսըմ ա, ճաշկերութունիցը եղը կատվին կանչիլ ա տալիս ուրան կուշտը, տընըմ ա կոքըմը, հըրցընըմ, թան ինչի մհար ա եկել: Կատուն էլ ըսկսըմ ա պատմիլը:

— Ինձ ըստեղ ա դըրկել իմ տերը՝ թավաղ Աստվածատուրը: Ո՛չ հեր ունի, ո՛չ մեր, ուրան խելքովը տանել ա թավաղ: Ընդրա դարավաչներին, ոսկուն հու արծաթին, մալին հու մոլլքին համբարք չըկա: Մին ամարաթ ունի, որ լուզվով պատմիլ չինիլ: Ինքն էլ դորթ որ Աստու տըված ա, չենք ու չնորքով. բոյ ու բուսաթով, որ խոսըմ ա, պերանիցը մարքարիդ ա թափվըմ: Թավաղըս մինակ շատ ա ապրել, մհի ուզըմ ա, որ տո՛ւ ուրան կըշտին ինես, ուզըմ ա փըսակվի քե նհետ: Ախպերըտ ուրան օրթնութունը տվել ա, մընըմ ես տո՛ւ: Մհի ասա՛, ի՞նչ ջուղաբ տանեմ իմ թավաղիս:

— Թավաղիտ տուր իմ ես մըտանին,— ասըմ ա ախճիկը հու մաննիցը մըտանին հանըմ տալիս կատվին:

Կատուն էլ մին մըտանի յա տալիս ախճըկանը, որի ալը հազար ջուռա շափաղին ա տալիս:

— Էս էլ իմ թավաղի բեհը,— ասըմ ա կատուն:

Հըրսընքի օրը որոշիլից եղը կատուն կանխ ա եղ հու ըսկսըմ ա թանդանիք տենալը: Հենց որ վանդեն թըմամըմ ա, կատուն քառսուն ծիավոր մակառ ա հազըմ, չիմմին էլ մին ջուռա հըքցընըմ, Ծատուրին էլ գուքըմ-զըրթանըմ ա, նըստըցնըմ մին ոսկաճըրած կառեթ, լըծըմ ա ոսկի յալերով չորս յորդա ծիանք, հարսի մըհար վեր ա ունըմ մախմուռ չորեր՝ ոսկի թելերով նախաձ, մին խելանք էլ ոսկի հու արծաթ, ինքն ընգնըմ առաջին հու յալլա՛...

Հարսի ախպերը Հըրսընքավորին ունթունըմ ա թավաղավարի, օխտն օր ու օխտը քըչեր հըրսանիք ա անըմ, եղո քըվոր նհետ տինըմ ա օխտը արծաթ ծի արծաթ գիհանրով, օխտը ոսկի ծի ոսկի գիհանրով, իրեք անքամ էլ օխտը դուլլուղչիք հու ճընապա տինըմ:

Աստվածատուրն էլ ուրան ամարաթըմն ա օխտն օր ու օխտը քըչեր հըրսանիք անըմ հու ջանիլ կընգա նհետ քեփ ա անըմ, քեփ քաշըմ:

Տարին էրկու անքամ դոնադ են քինում կրնգա ախպոր տունը, էրկու անքամ էլ ընդան են դոնադ կանչում: Ապրում են թավադի դայդի:

Աս ա կենում խելանք վախտ: Չալ կատուն քաֆթաում ա, էլ ոչ մին պան կարում չի անի, տանում ա Մատուրի աչկի փուշը: Կատուն տենում ա էտ պոլորը հու մին օր էլ սուտմեռուկի յա տալիս Մատուրի օթադի տունը: Ռավոտը թավադ տանած Աստվածատուրը, որ տնուը պանց ա անում, տենում ա մեկնված չալ կատվին, հենց ա գիղըմ՝ սատկած ա, հաքվիցը փրոնում ա, չըպրտում դարամի մեչը: Կնիկը, որ տենում ա կատվի հալը, դարամիցը հանում ա, պերում տուն, լըղըցնում հու տինում ուրան թախթին:

Մատուրը որ ետ պանը տենում ա, աջըղվում ա.—էս սատկած լեչին հո՞ւր ես պերել տուն:

Կատուն որ լսում ա ես խոսկերը, տեղիցը վեր ա թրոնում, քինում ոխճարի մորթին պերում, չըպրտում Մատուրի առաչը, ասում.—Լան՛վ եչի, էս քու առաչին չորն ա, որ ես եմ տվել քե: Քե մհար օխտը աժղահոցը պաժառ տրվա, էս ամարաթնին, էսքան մալ ու մոլքը տրվա քե, քեզ մհար մին կեղ քոչըցրա պերա, որ մինակ չի մնաս, քսանհինգ տարի հալալ ախպոր պես քե դուլլուղ արա, Մատուր իր չինեցի թավադ Աստվածատուր, փսակեցի էս թավադի թավադ ախճրկա նհետ, ու մհի քե մհար սատկած լեչ եմ, չէ՞: Ըստեղ են ասել, է՛. «Նոքարից թավադ չի ինիլ»: Աչկերուտ փրոնիվա իմ տըված անմաղը,—ասում ա չալ կատուն հու կըլոխ վեր ունում, քինում:

Ըտանա եղը Մատուրը մին տարի էլ ա ապրում չի, հոքին տալիս ա Ասսուն: Կնիկը տանում ա չիմ մալը-մոլքի տերը հու թանգանան փրսկավում ա, ապրում մինչու մհի: Թան վըհատում չեք, քինացեք ծեր աչկովը տեսե՛ք: Ընդրա ամարաթին հըսնիլի մհար պետմա օխտը մոծակ լծեք բըրդանու դաբադին, նըստեք հու քինանք: Թան ճընապին տակը ծակվի, վախեք ոչ, ակնամուժով կըրկատեք, էվելի չոլտ կըհըսնեք:

